Պաշտոնը՝	**Կոալիցիայի իրավաբան**
Աշխատաժամանակ՝	40% զբաղվածություն
Տևողություն՝	16 ամիս
Աշխատանքի սկիզբ՝	Հունվարի 1, 2021
Վայրը	Հայաստանի Հանրապետություն

Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան հայտարարում է Կոալիցիայի իրավաբանի թափուր աշխատատեղի մրցույթ:
Կոալիցիայի իրավաբանը ենթարկվում է ծրագրի ղեկավարին:

Աշխատանքային պարտականություններ՝

- աշխատել Կոալիցիայի համակարգողի և իրավական հանձնաժողովի համակարգողի հետ,
- սերտ համագործակցությամբ աշխատել ծրագրի աշխատակազմի, Կոալիցիայի բոլոր աշխատանքային հանձնաժողովների համակարգողների հետ,
- կազմակերպել և տրամադրել իրավաբանական խորհրդատվություն հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների անդամներին, ծրագրի շահառուներին՝ «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի իրավական հանձնաժողովի համակարգողի հետ սերտ համագործակցությամբ,
- արագ արձագանքել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին օրենսդրության, հարակից օրենքների, ենթաօրենսդրական ակտերի փոփոխություններին և լրամշակումներին,
- նյութերի և տեղեկատվության, կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում մյուս աշխատանքային հանձնաժողովներին և Կոալիցիայի անդամներին,
- պատշաճ կատարել ծրագրի ղեկավարի կողմից տրված առաջադրանքները,
- յուրաքանչյուր ամիս ներկայացնել կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

Պահանջվող որակավորումներ և կարողություններ՝

- իրավաբանական բարձրագույն կրթություն, իրավաբանական տերմինաբանության գերազանց իմացություն,
- ՀՀ իրավական համակարգի, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող օրենքների և օրենսդրության ճյուղերի գերազանց իմացություն,
- հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային իրավունքի և ՀՀ օրենսդրության մաս կազմող միջազգային իրավական գործիքների իմացություն,
- նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում,
- հայերեն լեզվի գրավոր և բանավոր գերազանց իմացություն, անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը կհամարվի առավելություն,
- հաշվետվությունների կազմման գերազանց հմտություններ,

- կազմակերպչական և հաղորդակցության հմտություններ, ազդեցության և բանակցային գերազանց հմտություններ,
- ստեղծագործ մտածողություն, նախաձեռնողական և պրոակտիվ մոտեցում,
- անկախ և թիմում աշխատելու, ինչպես նաև պաշտոնից բխող այլ հանձնարարություններ կատարելու, ժամանակը կառավարելու և սթրեսային իրավիճակներում գործելու ունակություն:

Դիմելու կարգը

Համապատասխան որակավորում ունեցող անձինք կարող են ներկայացնել իրենց ինքնակենսագրականը և հետաքրքրվածության նամակը հայերեն կամ անգլերեն լեզուներով **coalition.cilr@gmail.com** հասցեին **մինչև ս.թ դեկտեմբերի 19-ը**: